



Նշված վճռի դեմ 2011թ. օգոստոսի 29-ին վճռաբեկ բողոք է բերել Ռեմմա Մելքումյանը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ Վարչական դատարանի վճիռը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը: Դատարանը մերժել է իր հայցադիմումը, սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված լինելու հիմքով, անհիմն նշելով, որ վիճարկվող ակտն իրավաչափ է, ընդունվել է օրենսդրությանը համապատասխան և հիմքեր չկան այն անվավեր ճանաչելու: Վարչական դատարանը չի պատճառաբանել նման համոզմունքի ձևավորման հիմքերը, ինչով խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Դատարանն անհիմն նշել է, թե հայցը ներկայացվել է սահմանված ժամկետի ավարտից հետո, այն դեպքում, երբ պետական գրանցման մասին իմանալու պահից երկամսյա ժամկետի ընթացքում ինքը դիմել է դատարան:

Նշել է նաև, որ դատարանը սխալ է կիրառել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի և նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, չի կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ու ապացուցման բեռը չի դրվել վարչական մարմնի վրա, ինչն էլ իր հերթին ևս նպաստել է նման ակտի կայացմանը:

Գտնում է, որ Վարչական դատարանն անմիջականորեն չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, չի որոշել փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործով ձեռք բերված և գործում առկա բոլոր ապացույցները:

Բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բավարարել վճռաբեկ բողոքը, բեկանել և փոփոխել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. հուլիսի 27-ի վճիռը՝ կայացնելով հայցը բավարարելու մասին նոր դատական ակտ կամ գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ռ.Մելքումյանը 2010թ. նոյեմբերի 30-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան:

2. 2010թ. դեկտեմբերի 2-ին Ռ.Մելքումյանի հայցադիմումը վերադարձվել է՝ վիճարկվող վարչական ակտը վերադատության կարգով բողոքարկելու վերաբերյալ տեղեկություններ չպարունակելու, հայցվորի պահանջի իրավական հիմքը չհստակեցվելու հիմնավորմամբ:

3. 2010թ. դեկտեմբերի 7-ին Ռ.Մելքումյանը կրկին ներկայացրել է նույն պահանջով հայցադիմում:

4. 2010թ. դեկտեմբերի 14-ի որոշմամբ Վարչական դատարանը Ռ.Մելքումյանի հայցադիմումը վերադարձրել է այն հիմքով, որ հայցադիմումում, որպես կողմ, չի նշել գործին մասնակցող բոլոր անձանց, չի նշել նաև հատուցման ենթակա բալեր ունեցող 24 անձանցից բաղկացած՝ հայցադիմումին կից ներկայացրած ցուցակում ընդգրկված մյուս անձանց, չի ներկայացրել ապացույց՝ նրանց կողմից իրենց հասանելիք բալերից հրաժարվելու մասին:

5. 2011թ. հունվարի 19-ին Ռ.Մելքումյանը կրկին ներկայացրել է հայցադիմում:

6. 2011թ. հունվարի 26-ին հայցադիմումը վերադարձվել է՝ այն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

7. 2011թ. հունիսի 8-ին Ռ.Մելքումյանը կրկին ներկայացրել է հայցադիմում, նշելով, որ 2000թ. դեկտեմբերի 21-ին Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում տեղի է ունեցել ԳԿ/Փ/Տ-ի փայտերեքի ընդհանուր ժողով, որում որոշվել էր ԳԿ/Փ/Տ-ի շենքերի հաշվին փակել փայտերեքի բալեթի հանդեպ մնացած պարտքերը, այդ թվում Մուղակալեռի կովանոցի մնացած մասից՝ Իվան Մելքումյանի՝ 40.000 դրամի, Ռեմմա Մելքումյանի՝ 40.000 դրամի, Շմավոն Մելքումյանի՝ 24.000 դրամի դիմաց, որոնք հաշվառված են ըստ բալեթի:

Հրանտ Խաչատրյանի և Ժենյա Մելքումյանի խնդրանքով թույլատրել են, որպեսզի նրանք կովանոցի շենքի իրենց մասը ժամանակավոր օգտագործեն, սակայն 2010թ. սեպտեմբեր ամսին Հ.Խաչատրյանը հայտնել է, որ կովանոցը գրանցված է իր անունով: 2010թ. սեպտեմբերի 30-ին կադաստրից ստացել է համապատասխան փաստաթղթերի պատճենները ու պարզել, որ կովանոցի շենքի, այդ թվում նաև իրեն պատկանող մասի նկատմամբ՝ 2006թ. հունիսի 14-ին գրանցվել է Հրանտ Խաչատրյանի սեփականության իրավունքը: Հայցվորը նշել է, որ նշված գրանցումը կատարվել է Հ.Խաչատրյանի կողմից ներկայացրած կեղծ փաստաթղթերի հիման վրա և խնդրել անվավեր ճանաչել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի իրավունքների պետական գրանցման միասնական 4-4 մատյանի 042022 համարի տակ 2006թ. հունիսի 14-ին կատարված գրանցումը:

8. 2011թ. հունիսի 10-ին Վարչական դատարանը հայցադիմումն ընդունել է վարույթ և նշանակել դատական քննության:

9. Վարչական դատարանը 2011թ. հուլիսի 27-ի վճռով Ռ.Մելքումյանի հայցը մերժել է:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձինք կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց՝ եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի համաձայն՝ հայցը դատարան կարող է ներկայացվել՝ վիճարկման հայցի դեպքում

երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից, ճանաչման հայցի դեպքում՝ անկախ ժամկետից:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դրանք կայացնելու կարգի, դրանց կառուցվածքի և բովանդակության... նկատմամբ տարածվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Նույն օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները՝ ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս:

Վարչական դատարանը վճիռ կայացնելիս, ղեկավարվել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով (ճանաչման հայց) և 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով և արձանագրել, որ հայցվոր Ռ.Մելքումյանը վիճարկման հայցը ներկայացրել է սահմանված երկամսյա ժամկետի ավարտից հետո՝ առանց դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդության:

Վարչական դատարանի վճռում նշված է, որ դատաքննությամբ չի հիմնավորվել հայցվոր Ռ.Մելքումյանի հայցապահանջը, գործով բացակայում են վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքերը, վիճարկվող ակտն իրավաչափ է, այն ընդունվել է օրենսդրությանը համապատասխան:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վարչական դատարանի վճիռը կայացվել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-123-րդ հոդվածների պահանջների խախտմամբ, ուստի, այն չի կարող լինել օրինական և համոզիչ: Կայացրած վճռում միայն շարադրվել են գործին մասնակցող անձանց դիրքորոշումները, վճռի պատճառաբանական մասում չեն նշվել դատարանի կողմից պարզված հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները վարչական ակտն իրավաչափ լինելու վերաբերյալ:

ԼՂՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժի մեջ է մտել 2009թ. հունվարի 1-ին:

Տվյալ դեպքում, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածը, որով սահմանված են հայց ներկայացնելու ժամկետները, անձի իրավական վիճակը վատթարացնող նորմ է, քանի որ այդ նորմով սահմանված են հայց ներկայացնելու կրճատ ժամկետներ, հետևաբար, այն չի կարող տարածվել վիճելի իրավահարաբերության վրա:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ

և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասում և Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված իրավունքն ենթադրում է Վարչական դատարանի պարտականությունը՝ հիմնավորել իր կայացրած դատական ակտը:

Սույն գործով Վարչական դատարանի վճռում իրավական հիմնավորում չտալը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն՝ Գերագույն դատարանը գնահատում է որպես դատավարական իրավունքի նորմերի խախտում, որը կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Այսպիսով, վերոնշյալ հիմքի առկայությունը Գերագույն դատարանը գտնում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վճռաբեկ բողոքը բավարարելու և Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Դատական ակտը բեկանելիս՝ Գերագույն դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկված վարչական մարմնի գործողությունների և դրանց իրավաչափության ստուգման համար անհրաժեշտ է դատական նոր քննություն:

Սույն որոշման հիմնավորումները հաշվի առնելով Գերագույն դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հայցվոր Ռեմմա Երեմի Մելքունյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. հուլիսի 27-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**